ՍԻՐԻՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս

ԱՆՁԻ ԵՍ-ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հոդվածում ընդհանուր անդրադարձ է կատարվել անձի Ես-կոնցեպցիայի ձևավորման վերաբերյալ տարբեր հեղինակների մոտ արծարծված տեսակետերին: Ես-կոնցեպցիայի ձևավորման առումով տարբեր ուղղությունների, դպրոցների ներկայացուցիչների կողմից կարևորություն է տրվում ամենատարբեր հանգամանքների ու գործոնների (նախածննդյան շրջանի իրադարձություններ, սպասված կամ չսպասված լինելը, մոր և նշանակալի այլ անձանց վերաբերմունքը, կենսաբանական առանձնահատկություններ և այլն): Հոդվածում մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել Ես-կոնցեպցիայի և դրա տարբեր բաղադրիչների ձևավորման վրա ազդող կարևորագույն հանգամանքները:

Հանգուցային բառեր, արտահայտություններ: Ես-կոնցեպցիա, հայելային Ես, ֆիզիկական ես, «նշանակալի այլ անձ», ներքնայնացում, մորֆոգենեզ, causa sui, ինքնագնահատական, ինքնագիտակցություն:

Բազմաթիվ հեղինակներ (Ու. Ջեյմս, Ռ. Բեռնս, Կ. Ռոջերս, Ա. Վալոն, Լ. Ս. Վիգոտսկի, Ս. Լ. Ռուբինշտեյն, Դ. Բ. Էլկոնին, Ի. Յու. Կուլագինա, Մ. Կեչկի ևն) ուղղակիորեն կամ անուղղակիորեն անդրադարձել են Ես-կոնցեպցիայի ձևավորման հիմնահարցին: Բոլոր հեղինակները համամիտ են այն փաստի հետ, որ երեխայի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունների հիմքերը դրվում են ամենավաղ մանկական տարիքից, նույնիսկ նախածննդյան շրջանից: Տարբեր մշակույթներում հղիության և նախածննդյան շրջանի հետ կապված բազմաթիվ սովորություններ խոսում են այն մասին, որ երեխայի անձի, Ես-ի ձևավորման, դրա որոշակի առանձնահատկությունների վրա նախածննդյան շրջանի իրողությունների, մոր ապրումների ու երեխայի հանդեպ վերաբերմունքի ազդեցության մասին իմացել են վաղնջական ժամանակներից: Ասենք, Հին Չինաստանում կար ավանդույթ «հոր ծանոթացում դեռ չծնված երեխայի հետ», որից հետո երեխան էր նույնիսկ ծնվելու կամ չծնվելու որոշում կայացնում՝ տնօրինելով իր կյանքը [3, էջ 28]: Ծնողների և հատկապես՝ մոր «սերը, երեխայի հայտնվելու հետ կապված մտքերը....պտղի ձևավորվող հոգեկանի և բջջային հիշողության վրա հզոր ազդեցություն են թողնում՝ ձևավորելով անձի հիմնական որակները, որ պահպանվում են հետագա կյանքի ողջ ընթացքում» [3, էջ 16]: Հոգեախտաբանության մեջ կան բազմաթիվ հայտնի փաստեր, երբ նախածննդյան շրջանում մոր կամ հարազատներից մեկի կրած ծանր տրավմայի հետևանքով են ձևավորվել երեխայի Ես-ի հետ կապված խնդիրները, ուրիշների խնդիրների ներքնայնացման ճանապարհով: Հայտնի դեպքերից են Վինսենթ Վան Գոգը, Սալվադոր Դալին և այլոք: Երեխայի Ես-ի առանձնահատկությունների վրա հզոր ազդեցության պատճառով էլ խորհուրդ չի տրվում նախածննդյան շրջանում կենտրոնանալ երեխայի սեռի վրա:

Շատ հեղինակներ նախածննդյան շրջանով են բացատրում նույնիսկ ապագա անձի ձգտումները, հետաքրքրությունները, մարդկանց հանդեպ վերաբերմունքը: Հայտնի է, որ Նապոլեոն Բոնապարտի մայրը միայն այդ հղիության

ընթացքում էր հետաքրքրություն ու հիացմունք դրսևորել ռազմական մրցությունների, մարտերի նկատմամբ, այցելում էր մարտադաշտեր և այլն [3, էջ 16]:

Թե՛ նախածննդյան, թե՛ հետծննդյան շրջանում երեխայի Ես-ի ձևավորման վրա մոր, ինչպես նաև այլ կարևոր ու նույնիսկ անկարևոր անձանց զգացողությունների, հույզերի, նույնիսկ չվերբալիզացված վերաբերմունքի ազդեցությունը ներկայումս կարելի է բացատրել տարբեր տեսություններով՝ ընդհուպ մինչև կենսաբանական: Այսպես, Ռուպերտ Շելդրեյկի մորֆոգենեզի տեսությոան համաձայն, թե կենսաբանական, թե քիմիական միավորները, նույնիսկ հոգեկանի երևույթները՝ ցանկացած միտք, ապրում ու զգացմունք որոշակի երկարության ալիքներով է օժտված և մշտապես ռեզոնանսի մեջ է այլ երևույթների ալիքների հետ: Այս է պատճառը, որ մարդկանց մտքի ալիքները առանց վերբալիզացվելու էլ կարող են փոխանցվել մեկ ուրիշին, իսկ վերջինս այդ մասին կարող է իմանալ, կոնկրետ ինֆորմացիան ավելի ծանոթ ու ավելի տպավորիչ կարող է նրան թվալ առանց այդ մասին իմանալու: Այսպես, Ճապոներեն չիմացող մարդիկ ավելի հեշտ են սովորում և լավ են մտապահում ճապոներեն այն բանաստեղծությունը, , որն ավելի մեծ թվով մարդիկ անգիր գիտեն: Ընդ որում, տարածությունը որևէ նշանակություն չունի ինֆորմացիայի փոխանցման վրա: Առնետների կոնկրետ տեսակների վրա Հարվարդի համալսարանում լաբիրինթոսի ելքը գտնելու առաջին փորձերի սկզբում կենդանիները ելքը գտնում էին մոտ 200 սխալից հետո, ավելի ուշ հաջորդ սերնդի առնետների սխալվելու թիվը կրճատվում էր մոտ 10 անգամ՝ ելքը գտնում էին մոտ 20-րդ անգամից: Վերջին փորձերը զուգահեռ անցկացվում էին նաև Ավստրալիայում՝ կրճատված սխալներով արդյունքներով: Հեղինակի տեսության համաձայն եթե նույն տարածաշրջանում հնարավոր էր ոչ վերբալ միջոցներով ինֆորմացիան փոխանցել, ապա այլ մայրցամաքում բնակվող առնետներին ինֆորմացիայի փոխանցում հնարավոր է միայն մորֆոգենետիկ ալիքների միջոցով [12, 13]:

Թե՛ նախածննդյան, թե՛ հետծննդյան շրջանում արտաքին աշխարհի, այլ մարդկանց ազդեցության մասին խոսել են շատ հեղինակներ (Մ. Մալեր, Դ. Վ. Վիննիկոտ, Դ. Բ. Էլկոնին, Կ. Ռոջերս, Հ. Ս. Սալիվան և այլոք), որոնց մենք մասամբ արդեն անդրադարձել [1, էջ 228-230]: Շրջապատող անձանց ազդեցությունը անձի Ես-կոնցեպցիայի ձևավորման վրա այնքան ուժեղ է, որ հիմք է տվել ամերիկյան սոցիոլոգ Չարլզ Հորտոն Կուլիին արդեն 1902 թ. առաջ քաշել հայելային Ես-ի գաղափարը (“looking glass self”) [**7**]: Հեղինակը զարգացնում է Ես-կոնցեպցիայի ջեյմսյան մոտեցումները՝ համարելով, որ դա և՛ երևույթ է, և՛գործընթաց, որը մշտական, չընդհատվող մտավոր գործողություն է՝ բաղկացած երեք փուլից կամ երեք բաղադրիչներից. մարդու պատկերացումն 1) այն մասին, թե ինչպես է մեկ ուրիշ անձ ընկալում իրեն, 2) այն մասին, թե ինչպես է այդ ուրիշը իրեն գնահատում, և 3) դրանց հիման վրա ձևավորված մարդու ինքնագնահատականը [**7**]: Կուլիի տեսության մեջ առաջ է քաշվում «նշանակալի այլ անձի» գաղափարը և մեծ կարևորություն է վերագրվում դրան Ես-ի ձևավորման հարցում: Հետագայում Ջ. Հ. Միդի մոտ այս իրական կոնկրետ անձին կամ անձանց ավելանում է նաև «ընդհանրացված այլ անձը» [ցիտ. ըստ՝ 5, էջ 38], որը կարող է խմբից աճել, վերածվել հասարակության:

Հայելային Ես-ը այն շատ կարևոր բաղադրիչն է, որ ցույց է տալիս, թե ինչպես են մարդու կարծիքով ուրիշներն իրեն ընկալում: Բնականաբար, իրականում դժվար է տարանջատել, թե Ես-կոնցեպցիայի կոնկրետ որ բաղադրիչին են վերաբերում այս կամ այն փոփոխությունները, քանի որ դրանք հանդես են գալիս միասնաբար, միևնույն փոփոխությունը

մի քանի բաղադրիչի կարող է վերաբերել: Սոցիալական, հայելային Ես-ի ձևավորմանն առնչվող մի շարք փաստեր արտացոլում են նաև այլ բաղադրիչներին առնչվող երևույթներ: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում ավելի ընդգծված ձևով արտահայտվում է կոնկրետ բաղադրիչի ձևավորումը: Այսպես, երեխայի զարգացման ամենավաղ փուլերում երեխայի ինքնագիտակցության, մասնավորապես՝ ֆիզիկական Ես-ի ձևավորման առաջին դրսևորումներից է համարվում, օրինակ՝ մոտ երկու տարեկանի շրջանում հայելու մեջ ինքն իրեն ճանաչելը: Սեփական Ես-ի ֆիզիկական պատկերը ճանաչելը ինքնագիտակցության պարզագույն դրսևորման ձևերից մեկն է: Հաջորդ աստիճանն արդեն ինքն իրեն երրորդ դեմքով՝ անունով անվանելն է: Արդեն երեք տարեկանի շրջանում երեխայի բառապաշարում սկսում է հայտնվել և իմաստավորված ձևով կիրառվել «Ես» դերանունը՝ սեփական անձին վերագրելով այս կամ այն դրական կամ բացասական որակը: Թե՛ անունը, թե՛ «ես» դերանունը արդեն խորհրդանշային ձևով արտացոլում են ողջ Ես-կոնցեպցիան, և ոչ թե դրա առանձին մասեր:

Սեփական Ես-ին լավ կամ վատ հատկությունների վերագրումը («Տիգրանը լավն (մեծ) է», «Ես ուժեղ եմ», «Ես չեմ կարող» և այլն), կարելի է համարել Ես-ի՝ զգացական-վերաբերմունքային բղադրիչի, ինչ-որ առումով՝ ինքնագնահատականի նախածիլեր: Չնայած շատ հեղինակներ (Ի. Յու. Կուլագինա, Ն. Ի. Մենչինսկայա) համարում են, որ բոլոր այս դրսևորումները սկզբնական շրջանում «որևէ ռացիոնալ բովանդակությունից զուրկ զուտ հուզական բովանդակություններ են, այդ իսկ պատճառով չի կարելի դրանք համարել ինքնագնահատական» [6]: Որոշ հեղինակներ երեխայի զարգացման վաղ շրջանի ողջ բովանդակությանն են միայն հուզական բնույթ վերագրում: Այսպես, Ա. Վալոնի կարծիքով, միջավայրի հետ երեխայի ամենավաղ շփումները զուտ հուզական բնույթ են կրում, ընդ որում, դրա հետևանքով նրա մոտ ձևավորվում է ոչ թե ապրումակցումը այլ մարդկանց հետ, այլ նրանց և իրավիճակների հետ մի տեսակ ձուլումը, մասնակցությունը: Այս է պատճառը, որ զարգացման վաղ շրջանում երեխան չի կարող իրեն ընկալել որպես այլ անձանցից անկախ էակ, և ըստ հեղինակի, խաղի ընթացքում «նույնիսկ իր և ուրիշների գործողությունները չի տարբերակում. նրա համար դրանք մեկ ամբողջական երևույթի տարբեր մասերն են» [9, էջ 57]: Այս առումով երեխայի Ես-կոնցեպցիայի վարքային բաղադրիչը ևս սկզբնական շրջանում այլ մարդկանց վարքի ինքնավերագրումների, իսկ ավելի ճիշտ՝ այլ մարդկանց և սեփական վարքի չտարբերակված ու միախառնված արտահայտություն է ունենում: Այս հարցի շուրջ Լ. Ս. Վիգոտսկին ավելի հստակ է արտահահայտվում՝ պնդելով, որ մինչև առանձին Ես-ի ձևավորումը երեխան հստակ չի տարբերակում իր և մեծահասակի գիտակցության բովանդակությունները: Հեղինակի կարծիքով, երեխային որոշակի հիմք (ֆիզիկական, սոցիալական հմտություններ, ասենք՝ քայլելու կարողություն և այլն) է անհրաժեշտ մեծահասակից (մորից) ոչ միայն հոգեբանորեն, այլ գոնե ֆիզիկապես էմանսիպացվելու, առանձնանալու համար: Դեռևս չձևավորված Ես-կոնցեպցիայով երեխայի գիտակցության համար Լ. Ս. Վիգոտսկու կարծիքով ամենահարմար բառը գերմաներենում երեխայի և մոր սիմբիոտիկ ընդհանրությունը նշանակող «Ur-wir» «Նախա-մենք» տերմինն է, «... սեփական Ես-ի տարբերակված, առանձնացված գիտակցմանը նախորդող հոգեբանական ընդհանրության գիտակցումն է, որ «Մենք»-ի գիտակցում է, բայց սա այն փոփոխվող, բարդ, իր մեջ «ես-ը» ներառող ուշ «Մենքը» չէ, որ ավելի ուշ տարիքային շրջանում է ի հայտ գալիս: Այս նախնական «Մենք-ը» ավելի ուշ

«Մենք-ի» հեռավոր նախնին է» [4, էջ 346]: Ես-ի առաջացումը՝ ինքնագիտակցության առաջին ամենախոշոր փոփոխությունը, տեղի է ունենում բավական մեծ քանակական կուտակումներից հետո՝ որպես որակական արդյունք:

Այս հարցին անդրադարձ կատարած գրեթե բոլոր հեղինակները ամբողջականացած Ես-կոնցեպցիայի ձևավորումը կապում են երեք տարեկանի ճգնաժամի հետ, իսկ որոշ հեղինակներ նույնիսկ կոնկրետացնում այս տարիքում ինքնագիտակցության բնույթը՝ համարելով այն «տեսակային ինքնագիտակցություն», իսկ վերը հիշատակված սեփական Ես-ը ճանաչելը, մարդկային վարքի նմանակումն ու նույնիսկ դրանց իսպառ մերժումը (որպես զարգացման ախտաբանական տարբերակ) վկայում են այն մասին, որ երեխան իրեն «գիտակցելով, առանձնացնելով ու տարանջատելով իրեն որպես առանձին էակ՝ միաժամանակ նաև շատ կարևոր ընդհանրացում է կատարում. գիտակցում է իր տեսակային պատկանելությունը» [11, էջ 145]:

Ըստ Ա. Վալոնի, երեք տարեկանի շրջանում տեղի է ունենում երեխայի Ես-ի տարանջատում ուրիշներից, իսկ Դ. Բ. Էլկոնինի կարծիքով, այն սոցիալական հարաբերությունների ճգնաժամ է, իսկ «հարաբերությունների ցանկացած ճգնաժամ սեփական Ես-ն առանձնացնելու ճգնաժամ է», իսկ այս շրջանում հայտնվող «Ես-ինքս» երևույթը «... ոչ միայն արտաքուստ դրսևորվող ինքնուրույնությունն է, այլ երեխայի առանձնացումը մեծից» [9, էջ 224]: Տարբեր արտաքին նշաններով հանդես եկող և առաջին հայացքից նույնիսկ սնափառություն, ժխտողականություն, ամբարտավանություն մեկնաբանվող տարիքային երևույթները (իրեն ուրիշներին հակադրելը, ուրիշների հետ համեմատելը, «Ես» դերանվան չափազանց շատ գործածումը) ընդամենը սեփական Ես-ը ուրիշներին հակադրելու միջոցով առանձնացնելու, որպես առանձին ինքնաբավ էակ ի ցույց դնելու միջոցներ են [2, 4, 9, 11, 15]: Հետաքրքիր է Է. Էրիկսոնի կարծիքը, ըստ որի, առաջին անգամ միայն դեռահասության և երիտասարդ տարիքում է անձի առջև խնդիր ծառանում սեփական Ես-ի և աշխարհում սեփական տեղի ամբողջական գիտակցման: Հեղինակը համարում է, որ խնդրի բացասական լուծման դեպքում անձի մոտ առաջանում է մի երևույթ, որի համար «դիֆուզ ինքնություն» հասկացությունն է առաջ քաշել [9, էջ 83]:

Բնականաբար, բազմաթիվ գործոններ են առանձնացվում, որոնց տարբեր հեղինակների կողմից վերագրվում է կարևորագույն ազդեցություն Ես-կոնցեպցիայի ձևավորման հարցում: Հեղինակների մի մասը գերագնահատում է սոցիալական կամ անձից դուրս այլ գործոնների ազդեցությունը, մյուսները՝ կենսաբանական նախադրյալները: Սակայն շատ հեղինակներ միայն դրանց գրեթե հավասարազոր համադրության արդյունքում են պատկերացնում Ես-կոնցեպցիայի ձևավորումը: Այսպես, Դոնալդ Է. Սյուփերը Ես-կոնցեպցիան համարում է ժառանգաբար փոխանցված ընդունակությունների (ինչպես ձեռքերի ճարպկությունը, ընկալման արագությունը և այլն) և որևէ գործունեություն իրականացնելու պատահական հնարավորությունների, մրցելու, ուրիշների կողմից հավանության արժանացած ստացված արդյունքների փոխազդեցության հետևանք [14, էջ 88]: Օ. Ի. Մուտկովը, ներկայացնելով անձի կառուցվածքն ու մասնավորապես՝ Ես-կոնցեպցիայի կառուցվածքը, համարում է, որ անձը ծնվելիս արդեն օժտված է բնությունից տրված որոշակի հոգեբանական «կարկասով», որի վրա կյանքի ընթացքում հավաքվում, ձևավորվում են տարբեր շերտեր Ես-ներուժը, որն ընդգրկում է «Ես-համակարգ», «Ես-Դուք» և «Ես-Մենք» («մակրոսոցիումի և միկրոսոցիումի հանդեպ վերաբերմունքի ցուցիչներ»), «Ես-Երկրային բնություն» և «Ես-Աշխարհ ենթահամակարգերը» [8, էջ 84]:

Չժխտելով վերոնշյալ հանգամանք-

ները՝ սակայն Վ. Ա. Պետրովսկին Ես-ի զարգացումը դիտարկում է որպես ավելի անկախ երևույթ՝ առաջին անգամ Սպինոզայի փիլիսոփայական causa sui-ն վերագրելով հոգեբանական Ես-ին: Հեղինակը համարում է, որ Ես-ը և պատճառն է և ինքն իր հետևանքը, քանի որ դա ինքն իր մեջ իրեն արտացոլող Սուբյեկտն է: «Անհատի Ես-ը արտացոլվողի ու արտացոլողի սուբյեկտային նույնականության ձևն է» [10, էջ 196]:

Այսպիսով, ամենատարբեր տեսակետերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ է տալիս ընդհանրացնել դրանք մի քանի կետերում.

Ես-կոնցեպցիայի ձևավորման հիմքերը դրվում են ամենավաղ մանկական տարիքում, ընդհուպ մինչև՝ նախածննդյան: Այս առումով հետաքրքիր է այն միտքը, որ նույնիսկ չշնված, չսաղմնավորված, այլ դեռ միայն մարդկային մտքերում գոյություն ունեցող անձի կերպարն ու այդ անձի վերաբերյալ ակնկալիքներն արդեն այդ ապագա անձի Ես-կոնցեպցիայի նախադրյալներն են:

Ես-կոնցեպցիայի ձևավորման և զարգացման վրա արտակարգ մեծ կարևորություն ունեն անձի՝ ինչպես բնածին, ժառանգաբար փոխանցվող առանձնահատկությունները, հոգեկան երևույթների ու գործընթացների կենսաբանական նախադրյալները, այնպես էլ շրջապատը, այն միջավայրը, որտեղ հայտնվում է անձը, դրա առանձնահատկություններն ու դրա մաս կազմող առավել հեղինակավոր, նշանակալի անձինք՝ իրենց սեփական առանձնահատկություններով, իրենից ունեցած սպասելիքներով, իր հանդեպ դրսևորվող վերաբերմունքով և այլն:

Կյանքի իրադարձությունները ևս կարող են իրենց ուրույն հետքը թողնել երեխայի Ես-կոնցեպցիայի ձևավորման, ինչպես նաև հետագա զարգացման ու արդյունքների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Ս. Հ., Ծնողական ներշնչանքների և անձի Ես-կոնցեպցիայի հետ հոգեբանական աշխատանքի մեր փորձը, Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, 270 էջ, էջ 228-230
2. Бернс Р. Развитие Я концепции и воспитание. М.: Прогресс, 1986, 421 с.
3. Бертин Андрэ, Воспитание в утробе матери, или Рассказ об упущенных возможностях /Пер, с англ. Г. П. Хлуновской.— Санкт-Петербург, МНПО «Жизнь», 1992.—32 с.
4. Выготский Л. С. Собрание сочинений. Т. 4, М.: «Педагогикаե, 1984, 432 с. էջ 346
5. Кон И. С. Открытие Я. Изд. Политиздат, 1978. – 367 с
6. Кулагина И.Ю. Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет. М. : Изд-во УРАО, 1999 г.
7. Кули Ч. Х., Человеческая природа и социальный порядок. Изд.: Идея-Пресс, 2000, 312 стр.
8. Мотков О.И. О парадоксах процесса самоактуализации личности / Магистр. 1995, № 6, с. 84 – 95
9. Обухова Л. Ф., Детская психология: теории, факты, проблемы. Издание 3-е, М.: Тривола, 1998.— 352 с.
10. Петровский В. А. Человек над ситуацией. – М.: Смысл, 2010. – 559 с.
11. Худоян С. С., Проблема возрастных кризисов развития личности. Диссертация на соискание ученой степени доктора психологических наук, ЕРЕВАН, 2009.
12. Шелдрейк Руперт - Семь экспериментов, которые изменят мир. http://royallib.com/book/sheldreyk_rupert/sem_eksperimentov_kotorie_izmenyat_mir.html
13. Шелдрейк Руперт, Морфогенетические поля и ''поля сознания'' http://www.isra-trainings.com/articles/holo/mor_fields.html
14. Donald E. Super,Vocational Adjustment Implementing a Self-Concept. The Vocational Guidance Journal Volume 30, Issue 2, pages 88–92, November 1951 American Counseling Association. Article first published online: 5 JUL 2012. http://onlinelibrary.wiley.com/doi/10.1002/j.2164-5892.1951.tb02607.x/abstract;jsessionid=571F7414A82C5DAFF60CF1CE14EC5DD7.f01t03
15. Theoretical Psychology. Vigotskian Writings. Jurnal of Russian and East European Psychology. Vol. 50, no. 1, January-February 2012. pp. 50-64.

THE SELF-CONCEPT FORMATION

SIRINA ARAKELYAN

Lecturer At The Chair Of Developmental And Applied Psychology Of The Armenian State Pedagogical University After Kh. Abovyan

In the article the author generally analyses different authors' opinions concerning the Self-concept formation. In psychological literature many aspects and factors are mentioned and pointed out (prenatal period events, welcome or unwelcome child, mother's and significant others' attitude, biological features etc.). In the article a detailed analysis of the most important factors, which can influence the formation and the development of different components of Self-concept is presented.

ФОРМИРОВАНИЕ Я-КОНЦЕПЦИИ ЛИЧНОСТИ

СИРИНА АРАКЕЛЯН

Преподователь кафедры развития и прекладной психологии Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

В статье автор анализирует разные подходы авторов, относительно формирования Я-концепции. В психологической литературе разными авторами подчеркивается значимость многих аспектов и факторов в формировании Я-концепции (события пренатального периода, желанный или нежеланный ребенок, отношение матери и значимых других, биологические особенности и т.д.). В статье дается подробный анализ наиболее важных факторов, которые могут оказать влияние на формирование и развитие различных компонентов Я-концепции.